

*ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

*ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
2020Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՀՈԿՏԵՍԲԵՐԻՆ*




**Սպառողական գների փոփոխությունները Հայաստանի Հանրապետությունում  
2020թ. հունվար-հոկտեմբերին\***

Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում 12-ամսյա գնաճը (2020թ. հոկտեմբերը 2019թ. հոկտեմբերի նկատմամբ) կազմել է 1.3%, իսկ նախորդ ամսվա նկատմամբ՝ 0.5%:

Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչ (ԱՄՀՆԴ) երկու նիշ մակարդակ	2020թ.			
	հոկտեմբերը		հունվար-հոկտեմբերը 2019թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ,%	հոկտեմբերը 2019թ. դեկտեմբերի նկատմամբ, ինդեքս
	2019թ. հոկտեմբերի նկատմամբ, %	2020թ. սեպտեմբերի նկատմամբ,%		
00 Սպառողական գների ինդեքս- ընդամենը այդ թվում՝	1.3	0.5	0.9	99.0
01 Մնդամբերը և ոչ ակտիվային խմիչք	0.6	0.8	-0.2	95.2
02 Ակտիվային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	9.7	0.1	9.8	109.7
03 Հագուստ և կոշիկ	-2.8	3.4	1.2	97.0
04 Բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	0.3	0.1	1.0	99.9
05 Տնային գործածության առարկաներ, կեն- ցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	1.7	0.4	0.5	101.8
06 Առողջապահություն	2.5	0.0	2.1	102.4
07 Տրանսպորտ	1.1	0.6	-0.7	101.1
08 Կապ	-0.1	0.0	-0.1	99.9
09 Հանգիստ և մշակույթ	1.1	-2.8	1.0	99.2
10 Կրթություն	2.0	0.0	3.3	102.0
11 Ռեստորաններ և հյուրանոցներ	1.7	-0.7	1.4	102.5
12 Տարբեր ապրանքներ և ծառայություններ	4.0	0.2	3.6	104.1

**Սպառողական գների փոփոխությունները 2020թ. հոկտեմբերին 2015թ. նկատմամբ \*\***




\* Սույն վերլուծականում հիմնականում տրված է Հայաստանի Հանրապետությունում 2020թ. հոկտեմբերի գնային փոփոխությունների հակիրճ մեկնաբանությունը: Սպառողական գների ինդեքսների ավելի ընդարձակ (այդ թվում, կուտակային (աճողական)) տեղեկատվությունը գետեղվում է «Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում» ամսական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1300-301):

\*\* Եվրոստատի կողմից սահմանված ինդեքսի հիման ժամանակաշրջան:


Ենթահնդեքսների փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2020թ. հոկտեմբերին (նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ)

%



Ենթահնդեքսների փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2020թ. հոկտեմբերին (նախորդ ամսվա նկատմամբ)


%



Սպառողական գների փոփոխություններն ըստ սպառման հիմնական խմբերի

	2020թ.			
	հոկտեմբերը		հունվար-հոկտեմբերը 2019թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ, %	հոկտեմբերը 2019թ. դեկտեմբերի նկատմամբ, ինդեքս
	2019թ. հոկտեմբերի նկատմամբ, %	2020թ. սեպտեմբերի նկատմամբ, %		
Սպառման ապրանքներ այդ թվում՝	1.2	0.8	0.7	97.9
անդամերը և ոչ ակտիվային խմբից (ներառյալ ակտիվային խմբից և ծխախոտ)	1.5	0.8	0.7	96.6
ոչ պարենային ապրանքներ	0.6	0.7	0.8	100.4
Ծառայություններ	1.4	0.0	1.3	101.2

Սպառողական գների հավելածը 2011-2020թթ. հոկտեմբերին  
նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %



2020թ. հունվար-հոկտեմբերին սպառողական գների միջին ամսական նվազումը կազմել է 0.1% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է 0.2% նվազում):

Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2020թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ սպառողական գներն աճել են 0.3-0.7%-ով, այդ թվում, համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է ք. Իջևանում: Մայրաքաղաքում սպառողական գներն աճել են 0.4%-ով:


**Սննդամթերքի գներ:** 2020թ. հոկտեմբերին 2019թ. հոկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սննդամթերքի և ոչ ակոհոլային խմիչքի 0.6%, իսկ 2020թ. սեպտեմբերի համեմատ՝ 0.8% գնաճ: Վերջինս հիմնականում պայմանավորվել է մսամթերքի, կաթնամթերքի, բանջարեղենի, յուղերի և ճարպերի, շաքարի և շաքարավազի՝ 0.9-9.8% գնաճով:

Շաքարի և շաքարավազի ապրանքախմբում 2020թ. հոկտեմբերին 2019թ. հոկտեմբերի համեմատ արձանագրվել է 20.2%, իսկ 2020թ. սեպտեմբերի համեմատ՝ 9.8% գնաճ (ընդ որում՝ շաքարավազի գնաճը կազմել է 11.4%):

Յուղերի և ճարպերի ապրանքախմբում 2020թ. հոկտեմբերին 2019թ. հոկտեմբերի համեմատ արձանագրվել է 5.1%, իսկ 2020թ. սեպտեմբերի համեմատ՝ 2.6% գնաճ (ընդ որում՝ արևածաղկի բուսական յուղի միջին գնաճը 2020թ. հոկտեմբերին 2019թ. հոկտեմբերի համեմատ կազմել է 16.1%, իսկ 2020թ. սեպտեմբերի համեմատ՝ 7.5%):

Բանջարեղենի ապրանքախմբում<sup>1</sup> 2020թ. հոկտեմբերին 2019թ. հոկտեմբերի համեմատ արձանագրվել է 9.5% գնանկում, իսկ 2020թ. սեպտեմբերի համեմատ՝ 2.2% գնաճ:

Բանջարեղենի գների փոփոխությունները 2018-2020թթ. հունվար-հոկտեմբերին  
նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, %



<sup>1</sup>2020թ. սեպտեմբեր-հոկտեմբերին 2019թ. սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների նկատմամբ բանջարեղենի և մրգի առանձին տեսակների գների ինդեքսների մասին տեղեկատվությունը բերված է հավելված 1-ում:

Կաթնամթերք, պանիր և ձու ապրանքախմբում 2020թ. հոկտեմբերին 2019թ. հոկտեմբերի համեմատ արձանագրվել է 1.0%, իսկ 2020թ. սեպտեմբերի համեմատ՝ 1.1% գնաճ: Զվի գինը 2020թ. հոկտեմբերին 2019թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 0.5%-ով, իսկ 2020թ. սեպտեմբերի համեմատ գրանցվել է 4.1% գնաճ:


Մսամթերքի ապրանքախմբում 2020թ. հոկտեմբերին 2019թ. հոկտեմբերի համեմատ արձանագրվել է 1.7% գնանկում, իսկ 2020թ. սեպտեմբերի համեմատ՝ 0.9% գնաճ:

Ալկոհոլային խմիչքի և ծխախոտային արտադրատեսակների ապրանքախմբում 2020թ. հոկտեմբերին 2019թ. հոկտեմբերի համեմատ արձանագրվել է 9.7%, իսկ 2020թ. սեպտեմբերի համեմատ՝ 0.1% գնաճ:

Հացաբուլկեղենի և ձավարեղենի ապրանքախմբում 2020թ. հոկտեմբերին 2019թ. հոկտեմբերի համեմատ արձանագրվել է՝ 3.6%, իսկ սեպտեմբերի համեմատ՝ 0.2% գնաճ:

Մրգի ապրանքախմբում՝ 2020թ. հոկտեմբերին 2019թ. հոկտեմբերի համեմատ արձանագրվել է 11.3% գնաճ, իսկ 2020թ. սեպտեմբերի համեմատ՝ 1.1% գնանկում:

Մրգի գների փոփոխությունները 2018-2020թթ. հունվար-հոկտեմբերին  
նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, %




2020թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է ոչ ալկոհոլային խմիչքի, սուրճի, թեյի և կակաոյի 0.1% գնանկում, իսկ ձկան և ծովամթերքի ապրանքախմբում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

**Ոչ պարենային ապրանքների գներ:** Ոչ պարենային ապրանքների շուկայում 2020թ. հոկտեմբերին 2019թ. հոկտեմբերի համեմատ արձանագրվել է 0.6%, իսկ 2020թ. սեպտեմբերի համեմատ՝ 0.7% գնաճ:

2020թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է բնակարանի նորոգման նյութերի, վառելանյութերի և քսանյութերի՝ 0.1%, խոշոր կենցաղային սարքերի՝ 0.2%, կահույքի՝ 0.3%, փոքր կենցաղային սարքերի՝ 0.4%, մաքրող, լվացող միջոցների՝ 0.7%, հագուստի՝ 2.7%, տարբեր տեսակի կոշիկեղենի 4.8% գնաճ: Միաժամանակ, ոսկերչական զարդերի գները նվազել են 0.9%, իսկ ապակե ամանեղենի, ճաշասպասքի և տնային կահ-կարասունը՝ 0.3%-ով:

2020թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի և դիզելային վառելիքի՝ համապատասխանաբար 0.5% և 0.8% գնաճ: 2020թ. հոկտեմբերին 2019թ. հոկտեմբերի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գները նվազել են 14.4% և 20.9%-ով, իսկ 2019թ. դեկտեմբերի համեմատ՝ 16.0% և 22.4%-ով:


Բենզինի և դիզելային վառելիքի միջին ամսական գների փոփոխությունները 2017-2020թթ.  
2015թ. նկատմամբ



**Ցառայությունների սակագներ:** Մատուցված ծառայությունների ոլորտում 2020թ. հոկտեմբերին 2019թ. հոկտեմբերի համեմատ արձանագրվել է սակագների 1.4%, իսկ 2020թ. սեպտեմբերի համեմատ պահպանվել է սակագների համեմատաբար կայուն մակարդակ:

**Արտաթույքի շուկա:** 2020թ. հոկտեմբերին սեպտեմբերի համեմատ սպառողական և արտաթույքի շուկաներում արձանագրվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի՝ համապատասխանաբար 0.5% և 1.0% հավելած (ԱՄՆ դոլարն արժևորվել է): 2020թ. հոկտեմբերին 2019թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է սպառողական գների 1.0% նվազում և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 2.8% հավելած: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում սպառողական գները և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը նվազել են 1.6% և 1.7%-ով: 2020թ. հոկտեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 491.7 դրամ, ինչը 3.2%-ով բարձր է 2019թ. հոկտեմբերի համապատասխան ցուցանիշից (476.3 դրամ):

ՀՀ սպառողական գների ինդեքսի, ԱՄՆ դոլարի, եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքների փոփոխությունները 2019-2020թթ. հունվար-հոկտեմբերին նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ



Մրցի և բանջարեղենի առանձին տեսակների սպառողական գների տոկոսային փոփոխությունները ՀՀ-ում

	2020թ.			
	Սեպտեմբերը		Հոկտեմբերը	
	2020թ. օգոստոսի նկատմամբ	2019թ. սեպտեմբերի նկատմամբ	2020թ. սեպտեմբերի նկատմամբ	2019թ. հոկտեմբերի նկատմամբ
Խնձոր	-18.1	67.8	0.0	57.6
Տանձ	-19.7	9.8	-3.3	16.3
Նուռ	-32.0	1.1	-19.2	18.8
Դեղձ	-2.6	51.7	19.0	38.5
Խաղող	-41.1	-16.1	-6.7	-21.9
Ադամաթուզ (բանան)	2.9	-9.3	5.5	-12.1
Նարինջ	17.1	32.0	-3.3	3.6
Կիտրոն	-5.0	9.5	-4.5	10.2
Զմերուկ	-15.6	30.8	21.7	9.3
Ելակ	-3.9	8.2	-2.1	-15.5
Կաղամբ	-5.6	23.7	-16.4	7.7
Կանաչ սոխ	2.1	-27.9	-0.6	-17.7
Խառը կանաչեղեն	6.0	-18.9	0.2	-13.9
Լոլիկ	-15.8	-8.3	24.6	-29.7
Վարունգ	-9.5	-39.3	-2.4	-41.4
Սմբուկ	2.7	-0.5	11.8	-9.1
Պղպեղ	-8.4	-10.4	9.9	-17.0
Կանաչ լոբի	-8.1	-10.5	8.4	-16.2
Գազար	1.6	-26.4	4.8	-23.7
Ճակնդեղ	2.3	-35.4	5.8	-29.0
Գլուխ սոխ	-0.9	-26.2	1.4	-19.8
Սխտոր	5.3	98.9	9.6	106.6
Սունկ	-0.6	-8.2	-0.3	-10.3
Կարտոֆիլ	-9.6	-29.6	4.8	-23.1

Սպառողական գների ինդեքսը Եվրամիության, ԱՊՀ և աշխարհի մի շարք այլ երկրներում <sup>1</sup>

	2019թ. դեկտեմբերը 2018թ. դեկտեմբերի նկատմամբ	2020թ.									
		հունվարը	փետրվարը	մարտը	ապրիլը	մայիսը	հունիսը	հուլիսը	օգոստոսը	սեպտեմբերը	նոյեմբերը
		նախորդ ամսվա նկատմամբ									
Ավստրիա	101.8	99.3	100.0	100.5	100.2	99.1	100.4	99.9	99.7	101.0	100.2
Բելգիա	100.9	98.9	101.5	99.6	99.8	99.8	100.4	100.7	98.5	100.8	99.8
Բուլղարիա	103.1	100.5	100.0	99.5	99.6	99.8	99.9	100.8	100.4	98.8	99.3
Հունգարիա	104.1	100.9	100.3	100.2	99.5	100.4	100.4	101.2	100.0	99.5	102.5
Վերմանիա	101.5	99.2	100.6	100.1	100.4	100.0	100.7	99.5	99.8	99.6	99.8
Հունաստան	101.1	98.7	99.6	101.2	99.9	99.8	99.3	98.6	99.3	101.5	98.0
Դանիա	100.8	100.2	100.4	99.7	99.9	99.9	100.1	100.9	99.6	99.8	100.5
Իռլանդիա	101.1	99.3	100.6	100.4	99.6	99.4	100.4	99.8	99.9	99.6	99.0
Իսպանիա	100.8	98.6	99.9	100.6	100.4	100.1	100.4	98.4	100.0	100.4	98.9
Իտալիա	100.5	98.2	99.5	102.2	100.5	99.7	100.0	99.3	98.7	100.9	98.9
Կիպրոս	100.7	99.2	100.2	100.2	99.9	100.1	100.4	99.8	100.8	99.2	99.7
Լատվիա	102.1	100.3	100.2	100.3	99.5	99.7	100.2	100.3	99.6	99.9	100.0
Լիտվա	102.7	100.2	100.0	99.9	100.2	99.5	100.4	99.7	99.8	100.3	100.0
Լյուքսեմբուրգ	101.8	99.6	101.0	98.8	99.2	99.7	100.9	99.7	100.9	99.8	99.5
Մալթա	101.3	98.6	100.6	101.0	102.9	101.2	101.4	100.0	100.7	98.7	105.3
Նիդերլանդներ	102.8	98.7	100.9	100.3	101.0	99.8	100.5	100.9	99.3	99.6	100.9
Լեհաստան	103.0	100.7	100.6	100.2	100.0	100.8	100.6	99.9	99.9	100.2	102.8
Պորտուգալիա	100.4	99.2	99.4	101.6	100.8	99.8	101.2	98.0	99.7	100.8	100.5
Ռումինիա	104.0	100.7	100.0	100.4	100.3	100.0	100.0	100.2	100.0	99.6	101.1
Սլովակիա	103.2	101.3	100.1	100.0	99.9	100.3	99.9	100.1	99.9	100.0	101.5
Սլովենիա	102.0	99.5	100.4	99.4	98.7	100.7	100.9	99.8	100.0	99.8	99.2
Ֆինլանդիա	101.1	99.6	100.5	99.8	99.6	99.9	100.2	100.3	100.0	100.0	100.0
Ֆրանսիա	101.6	99.5	100.0	100.1	100.0	100.2	100.1	100.4	99.9	99.4	99.5
Խորվաթիա	101.3	99.9	99.5	100.0	100.0	99.9	100.5	100.3	99.8	99.9	99.9
Չեխիայի Հանրապետություն	103.2	101.6	100.3	100.0	99.8	100.5	100.5	100.5	100.0	99.4	102.6
Շվեդիա	101.7	98.7	100.4	99.8	99.6	100.6	100.6	100.2	99.8	100.1	99.9
Էստոնիա	101.8	99.4	100.6	99.4	99.7	99.4	100.7	100.0	100.6	99.9	99.7
Ընդամենը Եվրամիության երկրներ (ԵՄ-27) <sup>2</sup>	101.6	99.3	100.2	100.5	100.2	100.0	100.3	99.8	99.7	100.0	100.0
Հայաստան	100.7	101.4	99.8	100.5	100.9	99.9	98.6	97.9	99.9	99.8	98.6
Ռուսաստան	103.0	100.4	100.3	100.6	100.8	100.3	100.2	100.4	100.0	99.9	102.9
Բելառուս	104.7	100.9	101.0	100.9	100.6	99.9	100.2	100.2	100.2	100.9	104.7
Ուկրաինա	104.1	100.2	99.7	100.8	100.8	100.3	100.2	99.4	99.8	100.5	101.7
Ղազախստան	105.4	100.7	100.6	100.9	100.9	100.5	100.4	100.3	100.1	100.3	104.9
Ղրղզստան	103.1	100.6	100.6	101.5	102.2	98.8	99.4	99.4	99.8	100.7	102.9
Մոլդովա	107.5	100.6	99.98	100.1	100.2	100.2	99.99	99.8	99.2	99.7	99.8
Տաջիկստան	...	100.6	100.4	101.6	102.2	100.5	99.9	100.3	100.2	...	...
Վրաստան	107.0	100.7	100.3	100.7	100.9	100.2	98.6	99.5	100.0	100.7	101.7
Կանադա	102.2	100.3	100.4	99.4	99.3	100.3	100.8	100.0	99.9	99.9	100.4
Նորվեգիա	101.2	99.9	99.9	99.9	100.5	100.2	100.3	100.8	99.5	100.4	101.3
Բրազիլիա	104.3	100.2	100.3	100.1	99.7	99.6	100.3	100.4	100.2	100.6	101.3
Կորեայի Հանրապետություն	100.7	100.6	100.0	99.8	99.4	99.8	100.2	100.0	100.6	100.7	101.0
Չինաստան	104.5	101.4	100.8	98.8	99.1	99.2	99.9	100.6	100.4	100.2	100.4
Միացյալ Թագավորություն	101.3	99.7	100.4	100.0	99.8	100.0	100.1	100.4	99.6	...	...
ԱՄՆ	102.3	100.4	100.3	99.8	99.3	100.0	100.5	100.5	100.3	100.1	101.3
Թուրքիա	111.8	101.4	100.4	100.6	100.9	101.4	101.1	100.6	100.9	101.0	108.3
Շվեյցարիա	99.9	99.6	99.9	100.1	100.1	99.8	99.9	100.1	99.9	99.9	99.3
Ճապոնիա	100.8	99.9	99.8	100.0	99.9	100.0	99.9	100.1	100.2	...	...

... - Տվյալները բացակայում են:

<sup>1</sup> Տեղեկատվությունը պատրաստվել է Ռուսաստանի Դաշնության պետական վիճակագրական ծառայության կայքում գետեղված «2020թ. սեպտեմբերի Ռուսաստանի և արտասահմանյան երկրների սպառողական գների ինդեքսների վերաբերյալ տեղեկանք»-ի հիման վրա:

<sup>2</sup> Եվրամիության երկրների համար ներկայացված են միասնական մեթոդաբանությամբ հաշվարկված և Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտներին համապատասխան հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ

«Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2020թ. հունվար-նոյեմբերին» մամուլի հաղորդագրության հրատարակման ժամկետը, համաձայն «2020 թվականի վիճակագրական ծրագրի», նախատեսված է 2020թ. դեկտեմբեր ամսվա 3-րդ աշխատանքային օրը (տես՝ ծածկագիր 1300-301, Մաս 3, էջ 132):